Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 20

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<08>> սեպտեմբերի 2022թ. ք. Երևան

2022 թվականի սեպտեմբերի 8-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար
Ս. Բաղինյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական, հանձնաժողովի անդամ
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը:
Բացակայում էին հանձնաժողովի անդամներ Տ. Գասպարյանը և Ռ. Այվազյանը:
Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 4 հայտերի քննարկում:

2. <<ԳԱԶ ՖՈՐԵՎԵՐ ԼԻԼԻԱՆ ԳՐՈՒՊ>> ՍՊ ընկերության սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման վայրի փոփոխության և լիցենզիայի վերաձևակերպման մասին ներկայացված հայտի քննարկում:

3.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

1.1 Քննարկվեց՝

«Հ ԵՎ Լ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի օգոստոսի 15-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի օգոստոսի 15-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին՝ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Ս. Շահումյան փ., 82 հասցեում: Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել էր լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից՝ արտադրական տարածքում:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«Հ ԵՎ Լ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.2 Քննարկվեց՝

«ՕՔՍԻԼԱԲ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի օգոստոսի 23-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և սեպտեմբերի 2-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ

հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի օգոստոսի 23-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Թևոսյան փողոց 7/1-1/1 հասցեում: Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել էր լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից՝ արտադրական տարածքում: Ուսումնասիրության արդյունքում հայտատուին առաջարկվել է գործունեության վայր հանդիսացող տարածքը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին:

2022թ. սեպտեմբերի 2-ին կազմակերպությունը ներկայացրել է նոր նյութեր /հատակագիծ և լուսանկարներ/, վերացնելով ուսումնասիրության արդյունքում բացահայտված թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՕՔՍԻԼԱԲ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.3 Քննարկվեց՝

«ՎԵԴՈՒ ԲԵՌՆԱՌԻՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի օգոստոսի 15-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և սեպտեմբերի 5-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի օգոստոսի 15-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին՝ Արարատի մարզ, ք. Վեդի, Արարատյան փ., թիվ 113 հասցեում: Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը իրականացվել էր լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից՝ արտադրական տարածքում: Ուսումնասիրության արդյունքում հայտատուին առաջարկվել է գործունեության վայր հանդիսացող տարածքը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին:

Կազմակերպությունը 2022թ. սեպտեմբերի 5-ին ներկայացրել է լրացուցիչ նյութեր /լուսանկարներ, որոնք վկայում են գործունեության վայրը պատշաճ տեսքի բերելու մասին/:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՎԵԴՈՒ ԲԵՌՆԱՌԻՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.4 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԱՇՈՏ ՓՈՉԻԿՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի օգոստոսի 16-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և 30-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի օգոստոսի 16-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին՝ ք. Երևան, Աճառյան փ., 7/8 հասցեում: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 146,5 քմ. տարածքը, որտեղ տեղակայված են տեխնոլոգիական սարքավորումները և որը ներկայացված է որպես գործունեության վայր անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 29082022-01-0075 վկայականի տվյալներով հադիսանում է ինքնակամ կառույց, անորոշ է կառույցի նպատակային նշանակությունը: ՀՀ կառավարության 2021 ապրիլի 15-ի N 600-Ն որոշման շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկերի համաձայն գործունեության սույն տեսակը կարող է իրականացվել հասարակական կամ արտադրական նպատակային նշանակության շենքերում կամ շինություններում:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԱՇՈՏ ՓՈՉԻԿՅԱՆ	0 կողմ, 5 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. «ԳԱԶ ՖՈՐԵՎԵՐ ԼԻԼԻԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի՝ Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ00013 լիցենզիայի գործունեության վայրի փոփոխման համար ներկայացված հայտերի քննարկում

Քննարկվեց՝

«ԳԱԶ ՖՈՐԵՎԵՐ ԼԻԼԻԱՆ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2022 թվականի օգոստոսի 26-ի դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ Կազմակերպությանը տրամադրված՝ Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ00013 լիցենզիայի գործունեության վայրի փոփոխման մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ00013 լիցենզիայի գործունեության վայրի փոփոխման մասին դիմումը և տեղեկացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի մայիսի 16-ին ստացել է սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր՝ ք. Երևան, Շենգավիթ, Ա. Չեխովի փ., 14/3 հասցեում: Կազմակերպության կողմից ներկայացվել է դիմում՝ գործունեության վայրը ՀՀ, ք. Երևան, Մալաթիա, Ծովակալ Իսակովի 32/9 հասցե փոփոխելու համար: Նոր գործունեության վայրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ մասնավորապես՝ ՀՀ, ք. Երևան, Մալաթիա, Ծովակալ Իսակովի 32/9 հասցեում տեղակայված շինության հատակագիծը, շինության՝ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցման վկայականը, տեխնոլոգիական սարքավորումներով հագեցվածությունը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԳԱԶ ՖՈՐԵՎԵՐ ԼԻԼԻԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են <<Լիցենզավորման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. <<ՍԻԼՎԵՌ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N5419 լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

<<ՍԻԼՎԵՌ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի սեպտեմբերի 6-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից

մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05419 լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց, որ <<ՍԻԼՎԵՌ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2022 թվականի սեպտեմբերի 6-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05419 լիցենզիան և լիցենզիայի N 00001, N 00002, N 00003 և N 00004 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ ներդիրների բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՍԻԼՎԵՌ>> ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

Հանձնաժողովի պատասխանատու
քարտուղար Ա. Ստեփանյան